ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	1-ին հոդված	Առաջարկվում է հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 164-րդ, 174-րդ և 175-րդ հոդվածները՝ սահմանել, որ օրենսգրքով կարգավորվում են դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները, դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները, Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները և գործունեության կարգը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	2-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ հոդվածը հանել:	**Ընդունվել է:** Նախագծի առաջին ընթերցումից հետո կկատարվեն համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	3-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածից հանել «սույն օրենսգրքով ստեղծված անկախ և անաչառ դատարանների կողմից» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	5-րդ հոդված	Առաջարկվել է հոդվածում լրացնել, որ դատավոր է նաև մասնագիտացված դատարաններում դատավորի պաշտոն զբաղեցնող անձը:	**Չի ընդունվել:** Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները:	Ընդունվել է:
5.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	6-րդ հոդված	Առաջարկվել է հոդվածի 1-ին մասում լրացնել, որ դատավորը չի կարող կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: 2-րդ մասում «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինել «Ազգային ժողովի և համայնքի ավագանիների» բառերով, ինչպես նաև լրացնել, որ դատավորը չի կարող այլ կերպ մասնակցել նախընտրական քարոզչությանը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	7-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածում լրացնել, որ դատավորը չի կարող լինել որևէ առևտրային կազմակերպության մասնակից՝ բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման, ինչպես նաև սույն	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում 7-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:		
7.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	9-րդ հոդված	Առաջարկվում է 9-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին» բառերը:	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում 9-րդ հոդվածում կատարվել են նշված փոփոխությունները:	Ընդունվել է:
8.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	10-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածի 4-րդ մասից հանել «կամ հեղինակությունը» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	11-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածի 2-րդ մասից հանել «օրենքի հիման վրա ստեղծված» բառերը:	**Ընդունվել է ի գիտություն:** Առաջարկը ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
10.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	12-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածի 2-րդ մասից հանել «հարցի» բառը:	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում 12-րդ հոդվածում կատարվել է նշված փոփոխությունը:	Ընդունվել է:
			Առաջարկվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործի քննության համար սահմանվող ուղենիշային տևողությունը բառը փոխարինել ժամկետը բառով:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	
			Առաջարկվում է 3-րդ մասում «պարզեցված» բառերից հետո լրացնել կամ «կամ արագացված» բառերը:	**Չի ընդունվել:** Արագացված ընթացակարգը ներառվում է պարզեցված ընթացակարգերի մեջ: (Տես, ՀՀ քաղ.դատ.	

				օրենսգրքի նախագիծը)	
			Առաջարկվում է հոդվածի 4-րդ մասից հանել «ոչ նյութական» բառերը:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	
11.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	14-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության դատարաններում դատական նիստերը դռնբաց են» բառերը փոխարինել «Դատարանի դատական նիստերը դռնբաց են» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
			Առաջարկվում է 5-րդ մասում ամրագրել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքը:	**Չի ընդունվել:** Նախագծի 20-րդ հոդվածում սահմանված է, որ դատական իշխանությունն ունի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.courts.am:	Ընդունվել է:
			Առաջարկվում է 7-րդ մասում «նախատեսված եղանակով» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
12.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	15-րդ հոդված	Առաջարկվում է 6-րդ մասում «սուդրոթարգմանչի» բառերը փոխարինել «ժեստերի լեզվով թարգմանչի» բառերով:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
13.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	17-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում՝«առաջին ատյանի» բառերից հետո լրացնել, որ դատավարության մասնակիցներն ունեն նաև վարչական դատարանի դատական ակտերը բողոքարկելու իրավունք:	**Չի ընդունվել:** Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության	Ընդունվել է:

				դատարանները և մասնագիտացված դատարանները: Իսկ վարչական դատարանը Նախագծի իմաստով համարվում է մասնագիտացված դատարան:	
14.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	20-րդ հոդված	Առաջարկվում է դատական իշխանության կայքի կառուցվածքին ներկայացվող հիմնական պահանջների սահմանումը ևս վերապահել ԲԴԽ-ին ՀՀ կառավարության փոխարեն:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
15.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	27-րդ հոդված	Առաջարկվում է վարչական դատարանի 24 թվակազմը փոխարինել 23-ով՝ հաշվի առնելով, որ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված Կ-167 նախագծով սահմանված է 23:	**Չի ընդունվել:** Վարչական դատարանի նախագահը ևս ներառված է թվակազմում:	Ընդունվել է:
16.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	29-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում «Վերաքննիչ դատարանն իր լիազորությունների» բառերը փոխարինել « Վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված լիազորությունների» բառերով՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածը: 2-րդ մասում «դատավարական օրենսգրքով» բառերը փոխարինել «համապատասխան օրենսգրքով» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
17.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	31-րդ հոդված	Առաջարկվում է վարչական վերաքննիչ դատարանի առնվազն 10 թվակազմը	**Չի ընդունվել:** Վարչական վերաքննիչ	Ընդունվել է:

18.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	36-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում սահմանել, որ Վճռաբեկ դատարանի նախագահն ընտրվում է Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
19.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	38-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում «դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը» բառերը փոխարինել «դատական դեպարտամենտը, որը պետական կառավարչական հիմնարկ է» բառերով և այսուհետ Դատական բառը պետք է նշել փոքրատառով:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
			Առաջարկվում է փոփոխություն կատարել «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում, քանի որ ըստ դրա հիմնադիրը Վճռաբեկ դատարանի նախագահն է, մինչդեռ Նախագծի համաձայն Դեպարտամենտի հիմնադիրը ՀՀ-ն է, որի անունից հանդես է գալիս ԲԴԽ-ն:	**Ընդունվել է ի գիտություն:** «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը որպես Նախագծին հարակից օրենք ենթարկվելու է փոփոխությունների:	Ընդունվել է:
			Առաջարկվում է 3-րդ մասում «դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին» բառերը փոխարինել «դատական դեպարտամենտի գործադիր մարմին» բառերով՝ հաշվի առնելով, որ	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման՝ հաշվի առնելով Դատական դեպարտամենտի առանձնահատկությունները:	Ընդունվել է:

			«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում նման մարմին չկա:		
20.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	51-րդ հոդված	Առաջարկվում է 5-րդ մասում «դատավորին ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի» բառերից առաջ լրացնել «Հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո բռնվելու դեպքում» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
			Առաջարկվում է-Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում են Բարձրագույն դատական խորհուրդը փոխարինել Խորհրդի նախագահին բառերով, իսկ ՀՀ արդարադատության նախարարին և Գլխավոր դատախազին հանել տեղեկացվող սուբյեկտների կազմից:	**Չի ընդունվել:** Այդ սուբյեկտներին տեղեկացնելը լրացուցիչ երաշխիք է: Իսկ առաջնահերթ պետք է տեղեկացվի ԲԴԽ-ն և ոչ նրա նախագահը, քանի որ ԲԴԽ-ն է դատավորների անկախությունը երաշխավորող մարմինը:	Ընդունվել է:
			Առաջարկվում է 5-րդ մասում «անդամներից» առաջ լրացնել «մյուս» անդամների բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
21.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	53-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում հստակ նշել, թե որ օրենքով են կարգավորվում դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները:	**Չի ընդունվել:** Օրենքի անվանումը փոփոխելիս կառաջանա սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:	Ընդունվել է:

22.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	61-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ՝ «Դատավորն ունի անհապաղ ընդունելության իրավունք Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և մյուս անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի մոտ:»	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
23.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	63-րդ հոդված	Առաջարկվում է օրենսգրքում կիրառել նույն տերմինը՝ կամ կարգապահական տույժ, կամ էլ՝ կարգապահական պատասխանատվության միջոց:	**Ընդունվել է:** Նախագծի առաջին ընթերցումից հետո կկատարվեն համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
24.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	66-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում սահմանել, որ դատավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ օրինական գործունեության նկատմամբ:	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
25.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	92-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածից հանել 6-րդ մասը, 5-րդ մասում ԲԴԽ մյուս 5 անդամների ընտրության հարցը կարգավորելիս հղում տալ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի կարգավորումներին:	**Ընդունվել է:** Նախագծի առաջին ընթերցումից հետո կկատարվեն համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
26.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	93-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրության համար առանց անընդմեջ վերընտրվելու իրավունքի փոխարեն սահմանել առանց վերընտրվելու իրավունքի դրույթը:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:

			2-րդ մասում սահմանել, որ ԲԴԽ անդամները պաշտոնը ստանձնում են Ազգային ժողովում հանդիսավոր պայմաններում, Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամները՝ Դատավորների ընդհանուր ժողովի նիստում, տալով հետևյալ երդումը..		
27.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	94-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասում սահմանել, որ ընտրված է համարվում Բարձրագույն դատական խորհրդի անդամների առավել ձայներ ստացած թեկնածուն: Ընդ որում, դա կարելի է սահմանել որպես երկրորդ փուլ, իսկ առաջին փուլում ընտրված համարել այն թեկանծուին, ող ստանում է ձայների առնվազն կեսը:	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
28.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	95-րդ հոդված	Առաջարկվում է դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերից հանել քաղաքական գործունեությամբ զբաղվելը, քանի որ այն նույնպես անհամատեղելիության պահանջ է:	**Ընդունվել է ի գիտություն:** Նախագծի Ազգային ժողով ներկայացված տարբերակում կատարվել են նշված փոփոխություններ:	Ընդունվել է:
29.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	144-րդ հոդված	Առաջարկվում է 1-ին մասում սահմանել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուները պետք է Ազգային ժողով ներկայացվեն տասնօրյա ժամկետում (Աժ կանոնակարգի 143-րդ հոդվածի 3-րդ մաս): Կամ փոփոխություն կատարել այդ օրենքում:	**Ընդունվել է:** ՀՀ կառավարության առաջարկի հիման վրա ընդունվել է և Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
			Առաջարկվում է 3-րդ մասում ևս Վճռաբեկ դատարանում դատավորների	**Չի ընդունվել:** Դիմում ներկայացնելու	Ընդունվել է:

			առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման մասին հայտարարություն տարածելուց հետո երկշաբաթյա ժամկետում դիմում ներկայացնելու ժամկետը փոխարինել:	համար 10 օրյա ժամկետ սահմանելը բավարար չի թվում այդ իրավունքն իրականացնելու համար:	
30.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	147-րդ հոդված	Առաջարկվում է կատարել փոփոխություն, քանի որ Վճռաբեկ դատարանի նախագահի թեկնածուն պետք է ընտրվի ԲԴԽ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կամ քվեարկությանը մասնակցածների ձայների մեծամասնությամբ, եթե իրավազորությունը 2/3 է:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
31.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	149-րդ հոդված	Առաջարկվում է մանրամասն սահմանել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի ընտրության կարգը, իսկ ժամկետները համապատասխանեցնել ԱԺ կանոնակարգի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետին:	**Ընդունվել է ի գիտություն:** Ենթակա է քննարկման:	Ընդունվել է:
32.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	176-րդ հոդված	Առաջարկվում է անցումային դրույթներից հանել հետևյալ դրույթը՝ Ազգային ժողովը և Ընդհանուր ժողովը Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի համապատասխան երեքական անդամների ընտրում են հինգ, իսկ երկուական անդամների՝ երեք տարի ժամկետով:	**Չի ընդունվել:** Բխում է ՀՀ Սահմանադրության 214-րդ հոդվածից:	Ընդունվել է:
			Առաջարկվում է Բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստի հրավիրումն իրականացնել ԲԴԽ լիազորությունները ստանձնելուց հետո, անդամների ընտրությունից հետո	**Չի ընդունվել:** Լիազորությունները ԲԴԽ-ն ստանձնում է Նախագահի լիազորությունների	Ընդունվել է:

			նախատեսելու փոխարեն:	ավարտման օրը, իսկ մինչ այդ պետք է Խորհուրդը կազմավորված լինի:	
			Առաջարկվում է 8-րդ մասում «ակտերից» առաջ լրացնել «համապատասխան» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
1.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացվում է միայն դատարանների կողմից:», իսկ 2-րդ մասը՝ «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է դատարանների և դատական իշխանության ինքնակառավարման սահմանադրական մարմինների կողմից:»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	24-րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործի հարուցումից կամ քրեական գործը դատարանում ստացվելուց հետո տվյալ գործով փաստաթղթերը հանձնվում են դատարանի այն նստավայրում, որտեղ քննվում է գործը»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	36-րդ հոդված	Առաջարկվում է 6-րդ մասի 4-րդ կետից՝ այն է ներկայացնում է Վճռաբեկ	**Ընդունվել է:** Կատարվել է	Ընդունվել է:

			դատարանի նախագահը ներկայացնում է Վճռաբեկ դատարանը և դատական իշխանությունը՝ բացառությամբ Սահմանադրական դատարանի, այլ մարմինների հետ հարաբերություններում, հանել «և դատական իշխանությունը՝ բացառությամբ Սահմանադրական դատարանի» բառերը:	համապատասխան փոփոխություն:	
4.	**ՀՀ կառավարություն**	42-րդ հոդված	Առաջարկվում է 9-րդ մասում Բարձագույն դատական խորհրդի դիրքորոշումը բյուջետային հայտի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ Ազգային ժողովում ներկայացնելու ներկայացնելու իրավունքը ԲԴԽ նախագահից բացի վերապահել նաև նրա հանձնարարությամբ Դատական դեպարտամենտի ղեկավարին:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	**ՀՀ կառավարություն**	44-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասում «օպերատիվ հետախուզական գործունեության նկատմամբ դատական վերահսկողության գործերը» բառերը փոխարինել «միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	**ՀՀ կառավարություն**	46-րդ հոդված	Լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, որպես կանոն, բաշխվում են դատարանի այն նստավայրի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			դատավորների միջև, որի սպասարկման տարածքում գործող՝ Հայաստանի Հանրապետության դատախազության համապատասխան ստորաբաժանումից ստացվել է քրեական գործը, եթե դրանով չեն խախտվում սույն հոդվածի 1-ին մասի պահանջները:		
7.	**ՀՀ կառավարություն**	49-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասում դատարանների նախագահներին գործերի բաշխման դրույթներում սահմանել նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին գործերի բաշխման կարգը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	**ՀՀ կառավարություն**	82-րդ հոդված	Առաջարկվում է 4-րդ մասի 2-րդ կետում սահմանել, որ Ընդհանուր ժողովը դատարանների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդին:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.			Առաջարկվում է 4-րդ մասի 9-րդ կետում քննարկում է Դատական դեպարտամենտի հաղորդումը Դատական դեպարտամենտի՝ դատարաններին և Ընդհանուր ժողովին սպասարկող աշխատակազմերի տարեկան գործունեության վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում դիմում է Բարձրագույն դատական խորհրդին Դատական դեպարտամենտի ղեկավարի հետագա պաշտոնավարման հարցը քննարկելու առաջարկով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
10.	**ՀՀ կառավարություն**	89-րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ մասում լրացնել նախադասություն՝ հետևյալ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			բովանդակությամբ. «Ընդհանուր ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի ընտրվելու դեպքում այդ անձը շարունակում է պաշտոնավարել միայն որպես համապատասխան դատարանի կամ Վճռաբեկ դատարանի պալատի դատավոր:»	փոփոխություն:	
			Առաջարկվում է 5-10-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրված անձը չի կարող լինել դատավոր: 6. Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ դատավորի, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրվելու դեպքում այդ դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները ստանձնելու օրվանից հրաժարական ներկայացնելու հիմքով համարվում են դադարած: 7. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամը բարձրաստիճան պաշտոնատար անձ է, և նրա պաշտոնավարումը համարվում է դատավորի փորձառություն: 8. Եթե անձը Ազգային ժողովի կողմից	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ որպես դատավոր պաշտոնավարելու ընթացքում, ապա Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների ավարտից հետո օրենքով կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկելիս համարվում է, որ նա կենսաթոշակի է անցել դատավորի պաշտոնից: 9. Բարձրագույն դատական խորհրդի անդամի աշխատավարձը սահմանվում է օրենքով, և այն չի կարող պակաս լինել Վճռաբեկ դատարանի դատավորի վարձատրությունից: 10. Եթե անձը Ազգային ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ որպես դատավոր պաշտոնավարելու ընթացքում, և նրա՝ որպես դատավոր ստացած վարձատրության չափը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար օրենքով սահմանված վարձատրության չափը, ապա նրա՝ որպես դատավոր ստացած վարձատրությունը պահպանվում է, իսկ պակաս լինելու դեպքում՝ նա վարձատրվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար օրենքով սահմանված չափով:		
11.	**ՀՀ կառավարություն**	91-րդ հոդված	Առաջարկվում է ԲԴԽ անդամների ընտրության համամասնությունը	**Ընդունվել է:** Կատարվել է	Ընդունվել է:

			սահմանել հետևյալ կերպ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններից ընդհանուր առմամբ պետք է ներկայացված լինեն բոլոր մասնագիտացումների դատավորներ:	համապատասխան փոփոխություն:	
12.	ՀՀ կառավարություն	93-րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ մասում «մեկ ամիս առաջ» բառերը փոխարինել «երկու շաբաթ առաջ» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13.	ՀՀ կառավարություն	102-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասում «նիստի քարտուղարի» բառերը փոխարինել «նիստի արձանագրողի» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
			5-րդ մասում «նիստի» բառից առաջ լրացնել «դռնբաց» բառը: Մասից հանել երկրորդ նախադասությունը: 6-րդ մասից հանել «և խորհրդի նիստին մասնակցող անձինք» բառերը:		Ընդունվել է:
14.	ՀՀ կառավարություն	104-րդ հոդված	Առաջարկվում է 4-րդ մասում «ձայների առնվազն 2/3-ով» բառերը փոխարինել «ձայների մեծամասնությամբ» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
15.	ՀՀ կառավարություն	144-րդ հոդված	Առաջարկվել է 1-ին մասում սահմանել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուները պետք է Ազգային ժողով ներկայացվեն տասնօրյա ժամկետում (Աժ կանոնակարգի 143-րդ հոդվածի 3-րդ մաս):	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
16.	ՀՀ կառավարություն	173-րդ հոդված	Առաջարկվել է 4-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.« Ընդ որում, Ազգային ժողովի կողմից ընտրվող	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի անդամների պաշտոնները համարակալվում են՝ առաջին, երկրորդ և երրորդ պաշտոնների համար սահմանելով պաշտոնավարման հնգամյա ժամկետ, իսկ չորրորդ և հինգերորդ պաշտոնների համար՝ եռամյա ժամկետ:»		
			5-րդ մասում «Ընդհանուր ժողովի կողմից» բառերից հետո լրացնել «ընտրվող» բառը, իսկ «Բարձրագույն դատական խորհրդի» բառերից հետո լրացնել «առաջին կազմի» բառերը: Նույն մասում «փետրվարի 15-ը» բառերը փոխարինել «մարտի 1-ը» բառերով:		Ընդունվել է:
			6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի անդամների յուրաքանչյուր պաշտոնի համար Ազգային ժողովի խմբակցությունները կարող են առաջադրել մեկական թեկնածու մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը՝ գրության մեջ նշելով նաև առաջադրվող թեկնածուի պաշտոնի համարը և պաշտոնավարման ժամկետը:»:		Ընդունվել է:
			7-րդ մասում «երկշաբաթյա» բառը փոխարինել «հնգօրյա» բառով:		Ընդունվել է:
			8-րդ մասը շարադրել հետևյալ		Ընդունվել է:

			խմբագրությամբ. «Մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 6-րդ մասը տարածվում է նաև Սահմանադրական դատարանի անդամի վրա:»:		